

չկար Հայոց Կաթողիկոս — Սահակ իբր այգ-
պիտի չէր ճանչցուած Աղզէն: Բայց զարմա-
նալի է որ 1629ին ի Սէչով (Բուկովինա)
տակաւին չէ լսուած Մովսէսի անունը: Առա-
ջին անգամ կը յիշէ իր անունը ի Լեհս Սի-
մէոն Լեհացի, որ 1629, Սեպտ. 15ին ի Լեմ-
բերգ օրինակած է Զուղայեցի Յովհ. Բժշկի
համար Ճառնտիր հաւաքածոյ մը⁵ «ի կա-
թողիկոսութեան... տեսոն տէր Մովսէսի...
որ յայտմամբի նստաւ յաջորդ յաթոն Ս.
Գրիգորի կամօքն Աստուծոյ եւ հաճութեամբ
եւ ընտրութեամբ ամենայն Հայոց՝ Եկեղե-
ցականաց եւ աշխարհականաց... զոր եւ
յայտմամբի մեռաւ Շահ Ապազն Պարսից եւ
ի կենդանութեան նստոյց զթոռն իւր Շահ
Սօֆի ժառանգ թաղաւորութեան իւրոյ, զոր-
դիսն ի բաց մերժելով»:

Կ'երեւայ թէ Մովսէս Կաթողիկոս օծու-
մէն քիչ յետոյ միւսանգամ մեկնեցաւ Պարս-
կաստան, չնորհաւորելու Շահ Սէֆիի գահա-
կալութիւնը, որ տեղի ունեցած էր 1629 Յու-
նուար 19ին: Այս մասին թէեւ ոչ Ղուկաս
Գառնեցի եւ ոչ Առաքել Դաւրիժեցի յայտնա-
պէս կը վկայեն, բայց բացայայտ կը տեսնուի
Փրա Դիմաս Կարմեղեանց մեծաւորի 1629
Նոյեմբեր 29ին առ Ս. Ժողովն գրած թղթէն,
ուր կ'ըսուի. «Յանցելում Մարտի գրեցի պա-
տասխանի... յայտ արարեալ եթէ յորժամ
հասանիցէ այսր նոր հայրապետն եւ վարդա-

⁵ Հանդ. Ամս., 1932, էջ 461: